ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1,

№ 61/1196

« 19 » 11 2018թ.

«ԱՐՄԱՎԻՐԻ ԿԱԹԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ-Ի
ՏՆՕՐԵՆ Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ
ՀՎՀՀ 04403595
Ք.ԱՐՄԱՎԻՐ, ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ 2

Հարգելի Հարությունյան

Երևանի քաղաքապետարանի և «Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 28.12.2018 թվականին կնքված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/1-8» ծածկագրով սննդամթերքի մատակարարման գնման պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) Ընկերությունը ստանձնել է պայմանագրով սահմանված հացի մատակարարման պարտավորությունը:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1.1, N 1.2 հավելվածներով՝ Տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար»:

Պայմանագրի 2.4.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավոր է «Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով»:

Պայմանագրի 2.4.2 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավոր է «Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

Պայմանագրի 2.4.5 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավոր է «Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր»:

Տեղեկացնում եմ, որ Ընկերությունը պատշաճ ձևով չի կատարում պայմանագրային պարտավորությունները, այն է՝ հաճախակի խախտում է պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարման ժամկետը, ինչպես նաև մատակարարված հացը շատ դեպքերում չի համապատասխանում տեխնիկական բնութագրով նախատեսված պայմաններին, որի մասին ընկերությանը բազմիցս զգուշացվել է էլեկտրոնային փոստին համապատասխան գրություններ ուղարկելու միջոցով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի «Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 2 օրից ավելի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ընկերության կողմից փաստացի չի կատարվել պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը միակողմանի հրաժարվում է կնքված ապրանքի մատակարարման գնման պայմանագրից՝ 130-րդ չափաբաժնի մասով՝ համապատասխանաբար համարելով այն միակողմանի լուծված և պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ առաջարկում եմ Պայմանագրի 6.3 կետով հաշվարկված տույժերի և Պայմանագրի կատարման ապահովման գումարը վճարել ՀՀ կենտրոնական գանձապետարանի 900015211429 հաշվեհամարին:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ Ժ/Պ

Է. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Կատարող՝ Ա. Վարդանյան
011 514-216